

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 137.<sup>2</sup>-րդ հոդվածի.

1. 9-րդ մասի 2-ից 4-րդ պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ.

<<Առանց սակաչափիչի, կամ առանց սուուգաչափված սակաչափիչի (տաքսոմետրի), կամ անսարք սակաչափիչով, կամ առանց համապատասխան ծրագրային հավելվածներով ներբեռնված էլեկտրոնային սարքերի կիրառման մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

Կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից առանց համապատասխան ծրագրային հավելվածներով էլեկտրոնային սարքերի կիրառմամբ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումների պատվերներ ձևակերպելն ու փոխանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Առանց տաքսի-ծառայություն մատուցող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ և տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի մասին տեղեկատվության կամ գնացուցակի մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

«ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատածև դեղին և սև տարբերանշանով կահավորված ավտոտրանսպորտային միջոցները առանց թափքի կողային մասում առկա ուղևորափոխադրման նվազագույն արժեքի (առկայության դեպքում), ուղևորափոխադրման սակագնի, նստելավարձի և (կամ) սպասելավարձի մասին (առկայության դեպքում) տեղեկատվության մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Պատվերներ (էլեկտրոնային հարթակներով, հեռախոսով, ռադիոկապով և այլ միջոցներով) ձևակերպող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզիա չունեցող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և ֆիզիկական անձանց պատվերներ փոխանցելը, ինչպես նաև պատվերների ձևակերպման համապատասխան ծրագրերով աշխատելու դեպքում լիազոր մարմնին տվյալների բազայից առցանց օգտվելու հնարավորություն չտրամադրելը կամ բազայի թերի տրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով օրական մինչև չորս ժամ տևողությամբ ուղևորափոխադրումների կազմակերպման համար լիցենզիա ունեցող ֆիզիկական անձանց էլեկտրոնային հարթակներով պատվերներ ձևակերպող և փոխանցող կազմակերպությունների կողմից չորս ժամից ավելի պատվերների փոխանցումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով օրական մինչև չորս ժամ տևողությամբ ուղևորափոխադրումների կազմակերպման համար լիցենզիա ունեցող ֆիզիկական անձանց կողմից օրական չորս ժամից ավելի տաքսամոտորային փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

30 և ավելի ավտոտրանսպորտային միջոցներով տաքսամոտորային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից փոխադրումներում հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրման համար նախատեսված նվազագույնը մեկ ավտոտրանսպորտային միջոց չներգրավելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով: >>:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: